

ՀՀ բանկային համակարգի եւ պետության համագործակցությունը միջազգային ֆինանսական կազմակերպությունների գործունեության համատեքստում խիստ կարեւոր գործընթաց է: Սակայն այս համատեքստում անհրաժեշտ է վեր հանել այն հիմնախնդիրները, որոնք առկա են ՀՀ բանկային համակարգում թե՛ տեղական եւ՝ թե՛ միջազգային մակարդակներում, որից հետո կարելի է քննարկել ՀՀ բանկային համակարգի եւ պետության համագործակցությունը միջազգային ֆինանսական կազմակերպությունների գործունեության համատեքստում:

2008-10թթ. հեռանկարային զարգացման ծրագրերով ՀՀ առեւտրային բանկերը հիմնականում շարունակել են նախկինում որդեգրած իրենց ռազմավարությունները եւ առաջիկա երեք տարիների համար սահմանել են հետեւյալ նպատակները.

- ✓ ակտիվների աճ,
- ✓ վարկային պորտֆելի աճ,
- ✓ կապիտալի աճ,
- ✓ ներգրավված միջոցների աճ,
- ✓ որեւէ հատվածում կամ որեւէ ցուցանիշով առաջատար դիրքի գրավում/պահպանում,
- ✓ շահութաբերության նպատակային ցուցանիշների աճ կամ պահպանում,
- ✓ ցածր ռիսկային վարկային պորտֆելի ապահովում,
- ✓ պլաստիկ քարտերով գործառնությունների աճ, վճարահաշվարկային ծառայությունների զարգացում,
- ✓ մատուցվող ծառայությունների ցանկի եւ ծավալների աճ,
- ✓ ֆինանսական հատվածում կոր սեգմենտների գրավում եւ կոր գործիքների ներդրում,
- ✓ կոր արդյունքների ներդրում,
- ✓ ապրանքանիշի առաջնորդում ՀՀ շուկայում,
- ✓ համագործակցություն միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ,
- ✓ հաճախորդների շրջանակների ընդլայնում,
- ✓ բանկի գործունեության աշխարհագրության ընդլայնում, կոր մասնաճյուղերի հիմնում,
- ✓ մասնաճյուղերի կողմից մատուցվող ծառայությունների ցանկի ընդլայնում,
- ✓ սպասարկման որակի բարելավում, բարձրորակ ծառայությունների մատուցում,
- ✓ կառավարման որակի, կառավարչական գործընթացների զարգացում,
- ✓ կիրառվող տեխնիկական միջոցների եւ տեխնոլոգիաների արդիականացում,

- ✓ կադրային համակարգի զարգացում,
- ✓ միջազգային վարկանիշային կազմակերպությունից վարկանիշի ստացում:

Վերը նշվածը ուրվագծում է այն շրջանակները, որի սահմաններում պետք է տեղի ունենա պետություն-առեւտրային բանկեր համագործակցությունը միջազգային ֆինանսական կազմակերպությունների գործունեության համատեքստում:

Նշվածի վառ օրինակ է 1996թ. դեկտեմբերի 27-ին Չարգացման միջազգային ընկերակցության եւ ՀՀ կառավարության միջեւ կնքված վարկային պայմանագիրը, որով ՀՀ կառավարությանը տրամադրվել է 11.6 մլն ՍԴԴ (շուրջ 15.9 մլն ԱՄՆ դոլար): Վարկային ծրագրի նպատակն է՝ մասնավոր ձեռնարկություններում եւ բանկերում եւ ֆինանսական ներդրումների ապահովման, արտահանման կողմնորոշում ունեցող համատեղ ձեռնարկությունների ստեղծման, ձեռնարկությունների կառավարման բարելավմանն աջակցման եւ բանկային ու կապիտալի շուկայի հաստատությունների զարգացման միջոցով ամրապնդել հայկական մասնավոր ձեռնարկություններն ու բանկերը: Ծրագիրը բաղկացած է երկու բաղադրատարրից՝ 1) ֆինանսական ներդրումների ապահովում, որն իրականացվելու է հետեւյալ կերպ. տեղական բանկերի միջոցով ֆինանսավորվելու են թեթեւ արդյունաբերության, ագրոքիզնեսի, առեւտրային ծառայությունների, առեւտրի, շինարարության, հանքահանության մեջ զբաղված ձեռնարկություններում իրականացվող հատուկ տնտեսական զարգացման ծրագրերը, 2) բանկերում եւ կապիտալի շուկայում ինստիտուցիոնալ բարեփոխումներ իրականացնելու համար առեւտրային բանկերին եւ ձեռնարկություններին մատուցվելու են խորհրդատվական ծառայություններ, տրամադրվելու են սարքավորումներ եւ կազմակերպվելու են վերապատրաստման դասընթացներ: Այս ծրագրի շրջանակներում դրամաշնորհներ են տրամադրվելու արտահանման կողմնորոշում ունեցող ձեռնարկություններին: Վարկը տրամադրվում է 35 տարի ժամկետով՝ ներառյալ 10 տարի արտոնյալ ժամկետը: Հիմնական գումարի մարումն ու վարկի սպասարկման վճարներն իրականացվելու են կիսամյակային կտրվածքով, յուրաքանչյուր տարվա հունվարի եւ հունիսի 15-ին՝ 2007-31թթ. ընթացքում: 1999թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ այս վարկային ծրագրից բաշխվել է 9.64 մլն ԱՄՆ դոլար:

Ֆինանսական հատվածի զարգացում. ՀՀ բանկային համակարգում Եվրաբանկի գործունեության նպատակն է տեղական առեւտրային բանկերի կապիտալի բազայի ընդլայնումը՝ նրանց բաժնետիրական կապիտալներում փայամասնակցություն ունենալու միջոցով:

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻջԱԶԳԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՅՈՒՆԱՅՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ատենախոսության թեմա՝
Միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ ՀՀ բանկային համակարգի համագործակցության հիմնախնդիրները
Գիտական ղեկավար՝
Աշոտ ՄԱՐԿՈՍՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Գեւորգ ՍԱՐԴԱՐՅԱՆ
ՀԴՏՀ
ասպիրանտ



Մյուս օրինակը Եվրաբանկի կողմից 1999թ. հուլիսին հաստատված «Բազմաբանկ ֆինանսավորման մեխանիզմով» (Multi-Bank Framework Financing Facility) նախատեսվում է առավել վարկունակ եւ կառավարման ներուժ ունեցող առեւտրային բանկերի կանոնադրական կապիտալում ներդրում կատարել եւ տրամադրել շուրջ 10.0 մլն ԱՄՆ դոլլարի վարկաշար՝ փոքր եւ միջին ձեռնարկություններին վարկավորելու նպատակով: Այս մեխանիզմով տրամադրվող վարկերի մարման ժամկետը 5 տարի է՝ 24 ամիս արտոնյալ ժամկետով: Բաժնեմասերը հետագայում կվաճառվեն տեղական կամ միջազգային ներդրողներին կամ աճուրդի կղրվեն տեղական բորսաներում, եթե դրանք զարգացած լինեն: Միջոցների կառավարման եւ տեղական բանկերի ու նրանց հաճախորդ հանդիսացող փոքր եւ միջին ձեռնարկությունների ինստիտուցիոնալ զարգացման համար մշակվել է 750 հազ. եվրոյի (շուրջ 700 հազ. ԱՄՆ դոլլար) չափով ֆինանսավորում նախատեսող տեխնիկական համագործակցության փաթեթ:

«Բազմաբանկ ֆինանսավորման մեխանիզմի» շրջանակներում 1999թ. դեկտեմբերին Եվրաբանկի տնօրենների խորհուրդը ստորագրել է մասնավոր հատվածին աջակցության ծրագրի առաջին պայմանագիրը՝ «Միջազգային առեւտրային սեւծովյան բանկ» (Յայաստան) ՓԲԸ-ի հետ՝ 1.0 մլն ԱՄՆ դոլլարի փայամասնակցության վերաբերյալ: Ներդրումը փաստացի կատարվել է 2000թ. սեպտեմբերին. գնվել է «Միջազգային առեւտրային սեւծովյան բանկի» բաժնետոմսերի 25%-ը:

«Բազմաբանկ ֆինանսավորման մեխանիզմի» շրջանակներում, Եվրաբանկի նախնական գնահատումներով, նախատեսվում էր ֆինանսական միջոցներ տրամադրել Յայագրոբանկին, Յայեկոնոմբանկին, Գյուդփոխբանկին եւ Յայներարտբանկին: Սակայն 2000թ. սեպտեմբերի դրությամբ միայն Յայեկոնոմբանկին են փաստացի տրամադրվել 1 մլն ԱՄՆ դոլլարի վարկային միջոցներ: Յայներարտբանկի կանոնադրական կապիտալում 1.2 մլն ԱՄՆ դոլլարի ներդրում կատարելու եւ 0.5 մլն ԱՄՆ դոլլար վարկային միջոցներ տրամադրելու հարցերը քննարկվել են՝ համապատասխանաբար 2000թ. դեկտեմբերի 16-ին եւ 2001թ. փետրվարի 20-ին:

ՀՀ բանկային համակարգում իրականացվող ծրագրերին Եվրաբանկը մտադիր է ավելացնել նաեւ ինստիտուցիոնալ փոստային բանկի եւ Առեւտրին աջակցման ծրագրերը (Trade Facilitation Program): Առեւտրին աջակցման ծրագիրը Եվրաբանկը սկսել է իրականացնել 1999թ. հունվարից, եւ այն նախատեսված է Բալկանյան տարածաշրջանի, Կենտրոնական Ասիայի եւ Կովկասյան երկրների համար: Ծրագրի նպատակն է՝ ա) աջակցել ներ եւ միջտարածաշրջանային առեւտրին, բ) ծրագրին մասնակցող տեղական բանկերին օգնել կապեր հաստատել միջազգային բանկերի հետ, գ) մեծացնել տեղական բանկերի կարողությունները առեւտրի ֆինանսավորման գործում: Այս ծրագրի համաձայն՝ Եվրաբանկը երկարաժամկետ երաշխիքներ է տրամադրում տեղական բանկերին, որոնց հիման վրա նրանք կարող են վարկեր ներգրավել օտարերկրյա բանկերից եւ այնուհետեւ վարկավորել արտահանման կողմնորոշում ունեցող եւ միջազգային առեւտրում ներգրավված ձեռնարկություններին: Եվրաբանկի ընձեռած երաշխիքների հիման վրա նախատեսվում է ձեռք բերել (եւ տեղադրել) կապիտալ սարքավորումներ, իսկ օտարերկրյա վարկերի միջոցով՝ ֆինանսավորել արտահանմանն ուղղվող արտադրության կազմակերպումը: Հարկ ենք համարում նշել, որ Անդրկովկասյան երկրներից Ադրբեջանն ու Վրաստանը 1999թ. հունվարից մասնակցում են Եվրաբանկի այս ծրագրին (Ադրբեջանում՝ Ադրբեջանի միջազգային բանկի, իսկ Վրաստանում՝ Վրաստանի բանկի եւ TBC բանկի միջոցով): 2000թ. մայիսի 31-ի դրությամբ Եվրաբանկի այս ծրագրում նախկին ԽՅՄ երկրներից ներառված էին՝ Ուզբեկստանի 3, Ուկրաինայի 2, Ռուսաստանի 5, Ղազախստանի 3, Մոլդովիայի 3, Բելառուսի 2, Լիտվայի 1, Լատվիայի 2, Եստոնիայի 1 բանկ:

Ֆինանսական հատվածում Եվրաբանկի ռազմավարությունն է օժանդակել կապիտալի շուկայի ինստիտուցիոնալ զարգացմանը, ինչպես նաեւ ՀՀ կենտրոնական բանկին՝ բանկային ավանդների ապահովագրման սխեմայի մշակման եւ

ֆոնդային բորսայի ու ֆինանսական համակարգին տեխնիկապես աջակցող ֆինանսական այլ հաստատությունների հիմնադրման հարցերում:

Նախատեսվում է ուսումնասիրել սեփականաշնորհումը խթանող ռիսկային կապիտալ ֆոնդերի ֆինանսավորման ծրագրեր, զբաղվել պետական գույքի մասնավորեցման գործընթացում արեւմտյան ներդրողների մասնակցությունը ապահովելու խնդիրներով, ստեղծել մասնավոր բաժնետիրական կապիտալ ֆոնդ՝ զարգացման ներուժ ունեցող փոքր եւ միջին ձեռնարկություններին անհրաժեշտ ֆինանսական միջոցներ տրամադրելու նպատակով:

Բանկերից բացի, ֆինանսական այլ միջնորդներ (ապահովագրական ընկերություններ, կենսաթոշակային հիմնադրամներ) ձեռավորելու համար Եվրաբանկը նախատեսում է փայլամասնակցությունն ունենալ նրանց կապիտալներում:

Պետություն-առեւտրային բանկեր-միջազգային ֆինանսական կազմակերպություններ կապիտալի աջակցության ազդում է ՀՀ տնտեսության, ինչպես նաեւ բանկային համակարգի միջազգային վարկանիշի բարձրացման վրա:

Fitch վարկանիշային գործակալության կարծիքով՝ ԱՄՀ-ի հետ Յայաստանի վերջին ծրագիրն աջակցում է Յայաստանի սուվերեն վարկանիշին: 2009թ. մարտի 5-ին Fitch վարկանիշային կազմակերպությունն իր մամուլի հարցորդագրության մեջ նշել է, որ 540 մլն ԱՄՆ դոլլար կազմող ԱՄՅ վարկային մեխանիզմը կաջակցի գլոբալ եւ տարածաշրջանային շուկերի նկատմամբ Յայաստանի տնտեսության դիմադրողականության ավելացմանը՝ դրանով իսկ նպաստելով երկրի սուվերեն վարկանիշի հեռանկարին: Ներկայում Յայաստանի սուվերեն վարկանիշն արտարժույթով եւ ազգային արժույթով երկարաժամկետ պարտավորությունների գծով BB է՝ կայուն հեռանկարով: Երկրի առաստաղային վարկանիշը BB+ է, իսկ կարճաժամկետ վարկանիշը՝ B: Fitch-ի սուվերեն վարկանիշների գծով վերլուծական խմբի տնօրեն Էնդրյու Կոլիսունը նշում է, որ փոքր եւ համեմատաբար փակ տնտեսությունն ունեցող Յայաստանը չի խուսափել գլոբալ վարկային ճգնաժամից, քանի որ Ռուսաստանի տնտեսական անկման արդյունքում զգալի նվազել է դրամական փոխանցումների եւ ներդրումների ներհոսքը: Սակայն Յայաստանի որոշումը՝ դիմել ԱՄՅ աջակցությանը եւ թույլ տալ ազգային արժույթի առավել ազատ լողացող ռեժիմ, որոշումն էլ ազդանշան է ներկա դժվարությունները հաղթահարելու իշխանությունների գզուշավոր մոտեցմանը:

ԱՄՀ-ի կառավարիչ-տնօրեն Դոմինիկ Առոն-Կանը ԱՄՀ-ի խորհրդին կոչ է արել 2009թ. մարտի 6-ի իր նիստում հավանություն տալ Յայաստանին 540 մլն դոլլար 28-ամյա Stand By վարկ տրամադրելու որոշմանը, որը կազմելու է ԱՄՀ-ում Յայաստանի քվոտայի 400%: Երկիրը դիմել էր ԱՄՀ-ի օգնությանը, երբ պաշտոնական պահուստները նվազել էին 24%-ով 2009թ. հունվարի վերջի դրությամբ կազմել 1.26 մլրդ դոլլար՝ 2007թ. վերջի 1.66 մլրդ դոլլարի համեմատ: Կենտրոնական բանկը 2008թ. ընթացքում ծախսել էր շուրջ 360 մլն դոլլար՝ ՀՀ դրամի փոխարժեքը ԱՄՆ դոլլարի նկատմամբ 305 մակարդակի վրա պահելու եւ դրանով մասնակիորեն դոլլարացված ֆինանսական համակարգի նկատմամբ վստահությունը դժվարին պայմաններում պահպանելու համար: Կենտրոնական բանկը ներկայում թույլ է տալու փոխարժեքի ավելի մեծ տատանողականություն եւ ակնկալում է, որ ՀՀ դրամը կտատանվի 370 ՀՀ դրամ/ԱՄՆ դոլլար մակարդակի շուրջ: Սակայն Կենտրոնական բանկը պաշտոնապես չի հավաստիացրել, որ ՀՀ դրամի փոխարժեքը գտնվելու է որոշակի մակարդակի կամ որեւէ միջակայքի սահմաններում: ԱՄՀ-ի վարկային ծրագիրը ներառում է աջակցություն բանկերին՝ հնարավորություն տալով չեզոքացնել ՀՀ դրամի արժեզրկման հետեւանքները՝ բանկային համակարգի վարկերի ընդհանուր ծավալում 38%-ը արտարժույթային վարկերի առկայության պայմաններում: Զանի որ մասնավոր հատվածին տրամադրված բանկային վարկերը 2008թ. վերջի դրությամբ կազմել են ՀՆԱ-ի միայն 17%-ը, ցանկացած հիմնախնդիր դեռեւս բավական լավ կապիտալացված բանկային հատվածում կլինի առավել կառավարելի, քան նույն տարածաշրջանում BB սուվերեն վարկանիշ ունեցող երկրների

մեծ մասում: Հայաստանի ՀՆԱ-ի աճը 2008թ. դանդաղել է եւ կազմել 6.8%՝ 2007թ. 13.8%-ի համեմատ: 2008թ. չորրորդ եռամսյակում գրանցվել է տնտեսական անկում՝ 0.2%, որը հիմնականում պայմանավորված էր շինարարության աճի տեմպերի շուրջ 11%-ով նվազմամբ:

2008թ. չորրորդ եռամսյակում Ռուսաստանի տնտեսության կտրուկ անկումն ազդել է ստացվող դրամական փոխանցումների վրա, որն արտարժույթի եւ պահանջարկի ձեւավորման կարեւորագույն աղբյուր է: ԱՄՆ կանխատեսումների համաձայն՝ 2009թ. Հայաստանի տնտեսությունը կկրճատվի 1.5%-ով, սակայն Հայաստանի իշխանություններն ակնկալում են շուրջ 2% տնտեսական աճ՝ պայմանավորված ֆինկալ խթաններով, որոնք մասամբ ֆինանսավորվում են պաշտոնական աղբյուրներից: Ի լրումն ԱՄՆ վարկային ծրագրի՝ Հայաստանը ստանալու է 500 մլն ԱՄՆ դոլլարի վարկ Ռուսաստանից եւ առաջիկա 3 տարվա ընթացքում մինչեւ 525 մլն ԱՄՆ դոլլարի վարկային միջոցներ Համաշխարհային բանկից՝ փոքր եւ միջին ձեռնարկություններին ֆինանսավորելու համար: ԱՄՆ վարկային ծրագրի հաստատումը եւ հաջողությամբ իրագործումը, ինչպես նաեւ երկրում վարվող կարգապահ քաղաքականության պահպանումը կաջակցեն Հայաստանի վարկաւիշին: Աշխարհաքաղաքական ռիսկը մնում է կարելու գործն այս անկայուն տարածաշրջանում, թեւեւ հարեան Ադրբեջանի հետ սառեցված հակամարտության լուծման գործում կա առաջընթաց: Ներքին քաղաքական ռիսկը թվում է թուլացել՝ ընտրությունների հետ կապված 2008թ. մարտի անկայունության ժամանակահատվածից հետո, թեւեւ տնտեսության անկումը կարող է հետագայում նորից անհանգստությունների պատճառ դառնալ: Պետական ֆինանսները շարունակում են հանդիսանալ վարկանիշային դրական գործոն: Այսպես, Fitch-ի գնահատականներով՝ Հայաստանի պետական պարտքը 2008թ. վերջի դրությամբ կազմել է ՀՆԱ-ի միայն 14%-ը:

Անդրադառնալով ՎՉԵԲ-ՀՀ կառավարություն փոխհարաբերություններին՝ պետք է նշել, որ 2009-10թթ. Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկը ՀՀ տնտեսության տարբեր ոլորտներում ավելի քան 30 նախագծերի իրագործման ուղղությամբ կներդնի 180 մլն եվրո:

Ինչպես նշվում է Հայաստանի վերաբերող ՎՉԵԲ-ի նորացված ռազմավարության մեջ, որի շրջանակներում բանկը մտահոյ է ուշադրությունը սեւեռել այն ոլորտների վրա, որոնք ունեն են մեղմել տնտեսական անկման ազդեցությունը Հայաստանի վրա: ՎՉԵԲ-ը նշում է, որ ճգնաժամի դեմ պայքարում Հայաստանի հիմնական հույսը փոքր եւ միջին բիզնեսի հետագա զարգացումն է: ՎՉԵԲ-ը նախատեսում է ֆինանսավորել մասնավոր միկրո, փոքր եւ միջին ձեռնարկությունները՝ տեղական գործընկեր բանկերի միջոցով:

ՎՉԵԲ-ը ավելացնելու է օժանդակությունը հայաստանյան բանկերին՝ վարկային տրամադրման, առաջատար բանկերում մասնաբաժինների ձեռքբերման եւ բանկային հատվածի կոնսոլիդացումը խրախուսելու եղանակով:

ՎՉԵԲ-ն ընդգծում է Հայաստանում գործարար կլիմայի բարելավման գործընթացի ինտենսիվացման անհրաժեշտությունը՝ մատնանշելով, մասնավորապես, տնտեսության դիվերսիֆիկացման, արտահանման համար նախատեսված արտադրանքի մրցունակության բարձրացման, մենաշնորհների սահմանափակման, կոռուպցիայի դեմ պայքարի, ֆինանսական հատվածի ուժեղացման եւ հասարակական ենթակառուցվածքի առեւտրայնացմանը նպաստելու անհրաժեշտությունը:

Վերջին 4 տարվա ընթացքում ՎՉԵԲ-ը Հայաստանում 43 նախագծերում ներդրել է 125 մլն եվրո:

Ամփոփելով՝ պետք է փաստել, որ պետություն-միջազգային կազմակերպություններ-ՀՀ առեւտրային բանկեր շղթայի գործունեության կատարելագործումը կարող է հանգեցնել ինչպես տնտեսության մրցունակության, վարկունակության բարձրացմանը, այնպես էլ առեւտրային բանկերի կապիտալի խոշորացմանը, միջազգային վարկանիշի ավելացմանը, միջազգային ֆինանսական շուկաներին ինտեգրմանը:

Համաշխարհային տնտեսության զարգացման ներկա փուլում մեծ է միջազգային ֆինանսական կազմակերպությունների դերը ազգային տնտեսությունների ձեւավորման ու զարգացման գործում: 1930-ականների ճգնաժամից եւ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո համաշխարհային տնտեսությունը հայտնվեց քաոսային վիճակում, եւ աստիճանաբար հասկանալի էր դառնում, որ համաշխարհային տնտեսությունն ի վիճակի չէ կայուն գործել՝ առանց բոլոր երկրների համար համակարգման ու կառավարման ընդհանուր որոշման մեխանիզմի: Այս ամենը բերեց այն բանին, որ ստեղծվեց միջպետական ֆինանսական եւ տնտեսական կազմակերպությունների մի ամբողջ համակարգ՝ Համաշխարհային բանկն իր բանկերի խմբով, Արժույթի միջազգային հիմնադրամը, Եվրաբանկերի խումբը եւ այլն, որոնք հետեւում են համաշխարհային տնտեսության զարգացմանը եւ անհրաժեշտության դեպքում երկրներին օգնություն ցուցաբերում:

Միջազգային ֆինանսական կազմակերպությունները երկրների տրամադրում են ցածր տոկոսադրույքներով փոխառություններ, անտոկոս վարկեր եւ դրամաշնորհներ, օգնում լուծել նրանց մի շարք խնդիրներ այնպիսի ոլորտներում, ինչպես առողջապահությունը, կրթությունը, ֆինանսական եւ մասնավոր հատվածը, գյուղատնտեսությունը, բնապահպանությունը եւ այլն: Այս կազմակերպությունները սերտ համագործակցում են առեւտրային բանկերի հետ: Այլ կերպ ասած՝ առեւտրային բանկերը հանդիսանում են միջնորդավորված մարմին պետության եւ միջազգային ֆինանսական կազմակերպությունների միջեւ:

Ներկայում կան երեք հիմնական տարածաշրջաններ, որտեղ կենտրոնացվել են միջազգային բանկերը՝ ԱՄՆ-ը, Արեւմտյան Եվրոպան եւ Հարավ-արեւելյան Ասիան: Խիստ մրցակցային պայքարի արդյունքում միջազգային ֆինանսական կենտրոնների դերը ստանձնել են այնպիսի քաղաքներ, ինչպես Նյու Յորքը, Լոնդոնը, Ցյուրիխը, Տոկիոն, Լյուքսեմբուրգը, Հոնկոնգը, Մայնի Ֆրանկֆուրտը եւ այլն: Ներկայում փաստացի գոյություն ունեն ֆինանսական 13 կենտրոններ, որոնք ընդգրկում են զարգացած երկրների օտարերկրյա բանկերի մոտ 1000 մասնաճյուղեր եւ բաժանմունքներ: Ստեղծվել է միջազգային ֆինանսական յուրօրինակ մեխանիզմ, որն օգտագործելով հատուկ մասնագիտական էլեկտրոնային ցանցերը (SWIFT, Global Custodian եւ այլն)՝ գործում է շուրջօրյա եւ կարգավորում համաշխարհային ֆինանսական հոսքերի միջազգային արժույթային շուկաների շարժը: Զանի որ արտասահմանում մասնաճյուղեր ու բաժանմունքներ ունենալը թանկ հաճույք է, ուստի՝ բանկերը ստիպված են լինում սերտ համագործակցություն հաստատել արտասահմանյան բանկերի հետ՝ որպես թղթակից-բանկեր: Ծագում է հաշիվների փոխադարձ վարման համակարգը: Այդ հաշվարկները ստացել են «լորդ» (նրանց՝ մեր մոտ) եւ «նոստրո» (մերը՝ նրանց մոտ) անվանումները:

Միջազգային ֆինանսական կազմակերպությունները կարելու դեր են խաղում առեւտրային բանկերում՝ կորպորատիվ կառավարման կատարելագործման, թափանցիկության ապահովման եւ գործնական փորձառության բարձրացման գործում: Դրանք վերը նշված նպատակներն իրականացնում են առեւտրային բանկերի բաժնետիրական կապիտալում փայտամասնակցություն ձեռք բերելու միջոցով՝ տնօրենների խորհրդում ունենալով սեփական ներկայացուցիչը:

2008թ. ՎՉԵԲ-ը, օրինակ, իրականացրել է նոր ներդրումներ 7 առեւտրային բանկերում՝ 35 մլն եվրո ծավալով եւ իր կապիտալի մասնակցությունը մեծացրել է եւս 14 առեւտրային բանկերում՝ 59 մլն եվրո ծավալով: Ներկայում ՎՉԵԲ-ի իրականացրած համախառն ներդրումները կազմում են 899 մլն եվրո, որոնք տեղաբաշխվել են 25 պետությունների 55 առեւտրային բանկերում: ՎՉԵԲ-ը գործընկեր բանկերին օգնում է տրամադրել մեծ ծավալի վարկեր, ինչը առանձին բանկերը առանց ՎՉԵԲ-ի օգնության չէին կարող անել: Միաժամանակ՝ դա բանկերին թույլ է տալիս խուսափել այն ռիսկերից եւ պարտավորություններից, որոնք կարող են առաջանալ խոշոր փոխառուին մեծ ծավալի վարկ տրամադրելու դեպքում: Միջին վարկերի համաֆինանսավոր-